

ԳՐԱՄ ՏԵՐ ՄԻԹԱՅԻՆԱ.

ՑՈՒԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

281.6 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԸՑ

Հ

—


1925 ՕԳՈՍՏՈՒ 31 — 1926 ԱՊՐԻԼ 15



ԳԱՀԻՐԵ

Տպարան Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1926



---


ՑԱԽԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՂՈՎՈՅ

---

1925 Օգոստոս 31 — 1926 Ապրիլ 15

---

A 13833



Գերապատիւ

S. Թորգոմ Ս. Արքեպս. Գուշակեան

Առաջնորդ Հայոց Սգիպտոսի եւ.

Նախագահ Պատ. Թեմական Ժողովոյ

ԱՍՏ

Պատ. Թեմական Ժողովն իր 28 նոկտ 1925 թուակիր պատօնագրով Ժողովիս նախարարանը երկարաձգած էր մինչեւ յաջորդին ընտրութիւնը: Մրեսփոխանական ընտրութեանց նետեւանօք, այս ժամանակամիջոցը բաւական երկար տեւած ըլլալով, պարտ կը համարենք մեր նախորդ Տեղեկագրին ընդգրկած ժամանակաշրջաննեն (1923 Յունիս 20 — 1925 Օգոստոս 31) վերջ Ժողովիս կողմէ տնօրինուած գործոց եւ ազգ. անցքերու ընդհ. վիճակին մասին յաւելուածական ծանօթութիւններ պարունակող սոյն գրութիւնը Ձեր Բարձր Մրբագնութեան միջոցաւ ներկայացնել Պատ. Թեմական Ժողովոյ:

Խորին յարգանօք եւ որդիական ակնածանօք

ի Դիմաց Քաղ. Ժողովոյ

Ասենադպիր

Ասենապես

Sf. Ա. ՏէրՄԱՐԴԱՐԵԱՆ Sf. Ա. Բ. ԺԱՄԿՈԶԵԱՆ

# ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

Կառավարութիւնը, Մարմինայի կից գետինը զեղչով գնելու մեր առաջարկը մերժած և փոխարժէքն ալ միանըսւագ և իսկոյն վճարելու տեսակէտին վրայ պնդած ըլլալով, Ժողովս ստիպուեցաւ միջոցներ անօրինել այդ գումարը իսկոյն վճարելով հոգին տէր գառնալու :

Կալուածոց Տիար Տնօրէնը այս առթիւ առաջարկ ներկայացուցած էր այդ գումարը հայթայթելու հետեւեալ կերպով .

Ա.— Մախել Մարմինայի պատկանող Ֆում էլ Խալիկի կալուածը, հին ու կիսաւեր տուն մը, գնահատեալ 900 եզիպատկան սոկի :

Բ.— Տրամադրել Եկեղեցւոյ Հոգաբարձութեան երկամեայ խնայողութիւններուն գումարը 280 եզ. սոկի :

Գ.— Տրամադրել 150 սոկի Աղգ. անտուկէն : Ընդամէնը 1310 սոկի :

Ժողովս ընդունելի գտաւ կալ. Պր. Տնօրէնին այս առաջարկը և հոգը Տօյէն-ի վարչութեան երկրաչափին կողմէ Առաջնորդարանիս ներկայացուցիչներուն յանձնուեցաւ 1926 Մարտին պահանջուած 1283, 600 սոկիի վճարման փոխարէն : Մի քանի շաբաթէն, երբ թրանսֆերսիօն-ի ձեւակերպութիւններն առարտին, կալուածական արձանագրութիւնը պետի կատարուի ըստ այնմ:

Վերոգրեալ 1283, 600 եզ. սոկիի գումարը վճարուեցաւ

Աղքատախնամի վիճակահանութեան պահեստէն, որ պիտի ամբողջացուի դարձեալ, հետեւեալ կերպով.— Նոր զերեղմանատան բաժնէն ծախուելիք հողերու և զերեղմանաթաղերու գինն, փոխանակ Միաց. Հոգաբարձութեան գանձը մտնելու, պիտի ամփոփուի և պիտի յատկացուի Աղքատախնամի պարտքը վճարելու։ Պարտքին մացեալ կարեւոր մասը անշուշտ պիտի հատուցուի Ֆում էլ Խոլիկի տան վաճառումովն, որուն ձեռնարկուած է արգէն։

Միւս կողմէ, նկատելով որ թէն կռավարութիւնը հետեւանք չէ տուած հողը ձրի գնելու մեր առաջարկութեան, սակայն և այնպէս պատախանն ալ բացարձակապէս ժխտական չէ եղած, այլ ըսուած է միայն թէ պետական հողեր ձրիաբար կը արամագրուին միայն Երեսփ. Ժողովոյ որոշմամբ, ի մօտոյ, երբ Եգիպտ. Բարլամէնթը գումարուի այս մասին պէտք եղած դիմումը հարկ պիտի ըլլայ կատարել։ Նոյնպէս, գնուած հողը հանրային նպատակի մը գործածուելու սահմանուած ըլլալուն համար, դիմում պիտի ըլլայ յառաջիկային որպէսզի Առաջնորդարանն ետ ստոնայ բրանսերիբսիօն-ի ծախքերն ալ։

ՀՈԴԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ. — Եկեղեցւոյ և Մարմինայի Հոգաբարձութիւնն անփոփոխ կազմով իր պաշտօնը շարունակած է և երկամենայ շրջանին լրման առթիւ իր հրաժարականը ներկայացուցած՝ զոր ժողովս անշուշտ մերժած է յանձնարարելով որ Հոգաբարձութիւնն իր պաշտօնը շարունակէ մինչեւ իր յաջորդին բնարութիւնը։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԷՈՒԹԻՒՆ. — Միսատէր և հիւր քահանաներն նոյնութեամբ շարունակած են իրենց պաշտօնը։ Սոյն ութամսեայ ժամանակաշրջանին, հիւր քահանայից վրայ աւելցած է նաև Տ. Թէնիամին ք. Վաներեանն. որ Երուսաղէմէն եկած է իր որդւոյն մօտ, և այդ առթիւ հետեւարար կը քահանայագործէ Ա. Աստուածածին եկեղեցւոյ մէջ։

## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Ս. ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԱՅՔ .— Ժողովս , պաշտօնէ քաշուելէ առաջ , տեղեկագրի սոյն յաւելուածական մասով կ'ուղէ Պատ . Թեմական ժողովիդ հազորդել իր անայլայլ հիացութեան վիճակին Առաջնորդ Գեր . Տ. Թորգոմ Մ . Արքեպոս . Գուշակեանի անձին և գործունէութեան համար , որով ն . Գերապատութիւնը , իր անձին գէմ եղած ցաւալի պայքարներու դիմագրաւելով , շարունակած է անվհատ աշխատիլ և իր հովանին անպակաս ընել Եղիպտահայ համայնքին վրայէն : Իր անձին կը պարտինք գաղութիս բազմաթիւ հանրօգուտ ձեռնարկներուն յաջողութիւնը , զորս մի առ մի թուելը շատ երկար պիտի ըլլար : Իրր ազգ . գործոց ներքին անցքերուն մօտէն տեղեակ ու ձեռնհաս մարմինը , Ժողովս պարտք կը համարի սոյն յիշատակութիւնն ընել հռո , ժողովրդեան ներկայացուցիչներէ կազմուած Պատկառելի Թեմական ժողովիդ ի գիտութիւն :

ՊԱՇՏՈՆԵՈՒԹԻՒՆ .— Առաջնորդարանի պաշտօնէութեան վերակազմութիւնը , որուն ակնարկած էինք տպագրեալ տեղեկագրին մէջ , արդէն իսկ սկսած է տալ ակնկալուած բարի արդիւնքը : Ըլլայ օտար հաստատութեանց , գրամատուններու թէ անհատներու , ըլլայ ազգային ժողովրդական խաւերու հետ շփման մէջ զիւանատունը իր կոչումին բարձրութեան վրայ գտնուած է : Սոյն ութամսեայ շրջանին պաշտօնէ գաղրեցուցուած է Արարերէնի քարտուղար Էմիլ Աւատ , լեզուագարութեան պատճառաւ և իր պակասը լրացուցած են Տեարք Զ . Քէսէճեան և Զ . Ապտօ , որով Առաջնորդարանս իրր 100 սոկոյ խնայողութիւն մը ապահոված է : Խնքնաբերաբար հրաժարած է նաեւ քատուղար Պ . Յ . Յովուէփեան , որուն իրր յաջորդ Երուսաղէմէն հրաւիրուած է Պր . Վահրամ Խաչիկեան :

## ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ

Վարժարանի Հոգաբարձութիւնը, ըստ առաջնոյն, կը շարունակէ իր եռանդուն պաշտօնավարութիւնը։ Տնօրէն Պր. Կիրակոսիան եւս նոյնպէս։ Ուսուցչական կազմին մէջ կարեւոր փոփոխութիւն ըլլալով կայ միայն Պր. Լ. Թաշճեանի հրաժարումը։ Յիշեալը Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեանց Ընդհանուր Տնօրէն նշանակուած ըլլալով, իր Ֆրանսերէնի գասերը յանձնուած են Պր. Դ. Տիւրէէրեանի։ Պերլիցեան վարժարանը, ըստ առաջնոյն, կը հայթայթէ անդիիրէնի և ֆրանսերէնի եւրոպացի ուսուցիչներ։ Պէրլիցի անօրէնը անձամբ կ'աւանդէ Ֆրանսերէնը։ Միւս ճիւղերը կ'աւանդուին ըստ ծրագրի։

Վարժարանը ընթացիկ տարեշրջանին ունի 708 աշակերտ։ Հետեւեալ վիճակագրական տախտակը գաղափար մը կուտայ աշակերտութեան մասին։

Նախակրթարան	Մանչ	218		
»	Աղջիկ	195		
Մանկապարտէզ	Երկուու	295		
—		—		
Ընդհանուր		708		
Այս տարուայ ընթացաւարացու մանչեր		18		
»	»	»	աղջիկներ	10
Բոշակով աշակերտներ		283		
Զրի	»	425		

Ուսուցիչներ	19
Ուսուցչուհիներ	16
Քարտուղար	1
Թոշակներէ գոյացած ամսական հոյթ. 75 հզ. սս. (միջին)	
Աղջ. Մնառուկէն, ըստ պիտնէի, ստաց-	
ուելիք	4:00 > > (տարեկան)

Դալուստեան Վարժարանի շէնքին արտաքին ծեփերը  
բոլորովին թափած ըլլալով, անհրաժեշտութիւն ներկայա-  
ցած է փութով նորոգելու դայն, սակայն բացառիկ վարկե-  
րու չգոյութիւնը առ այժմ արգելք եղած է շինութեան։  
Անհրաժեշտ կը նկատուի յառաջիկայ ամառնային արձակուր-  
դին գլուխ հանել այս գործը որ մի քանի հարիւր սոկի  
զնահատուած է։ Նոյնպէս դրամական պատճռներով յետա-  
ճպուած է կառատան դասարանի վերածուելու ծրագիրը։



## ՆՈՒՊԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

---

Հելիոպոլսոյ Աղդ . Նուպարեան Վարժարանը 1925 Մեզուին իր Բ . տարեշրջանը սկսաւ : Գալուստեանի Հոգաբարձութիւնը կը վարէ սոյն հաստատութիւնը : Վսիմ . Բարեբարին փափաքին համաձայն ժողովս նոյն հոգաբարձութեան անդամ նշանակեց նաև Տիար Միհրան Ղազարոսեանը : Շէնքին Բ . յարկը աւարտած ըլլալով , իր նպատակին սկսաւ գործածուիլ տարեշրջանին սկիզբէն : Վարժարանի կարգերուն վրայ աւելցաւ նաև նախակրթարանի Գ.րդ դառնարանը : Հետեւեալ վիճակադրութիւնը կուտայ անհրաժեշտ ձանօթութիւնները այս Հաստատութեան մասին .

Մանչ աշակերտաներ	62
Աշակերտուհիներ	78
Ընդհանուր աշակերտաց	185
Մնայուն ուսուցիչ և ուսուցչուհիք	5
Այցելու > > ( Գալուստեանէն )	10
Թոշակաւոր աշակերտաներ	110
Զբի >	25
Թոշակներէ գոյացած ամսական հասոյթ	եզ. ուս. 48
Աղդ . Մնայուրէն տարեկան նպաստ	> > 80



## ՕՇԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ (ԶԱԿԱԶԻԿ)

---

Հոգաբարձութեան դիւանը կազմուած է հետեւեալ կերպով.

Պր. Յովհ. Սանտալեան, Ասենապետ. Հազարոս Գըրգ-էյէրեան, Ասենապիր. Միհրդատ Մկրեան, Գանձապետ. Յակոբ Բարթիկեան և Սրապ Գալպնեան, Խորհրդականք:

Վարժարանը իր բնական ընթացքը կը շարունակե ստանալով նաեւ Ազգ. Մնառէկէն աւրեկան նպաստը 80 սովոր:

---

ԳԵՂԱՄ ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

## ՇԻՆՈՒԹԻՒՆ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՔ.— Եկեղեցւոյ շինութիւնն յառաջ տարուած է դանդաղ այլ մեթոսիկ կերպով։ Շինութեանց դանդաղութեան գլխաւոր պատճառը եղած են որմանկարներն, որոնց համար անհրաժեշտ էին ծեփերուն մի քանի ամիս չորսալին։ Որմանկարներու գործն յանձնուած է Խտալացի արուեստագէտ Քօլիւչի-ի, որ աւարտած է գըրեթէ ամբողջովին։ Այժմ կը ձեռնարկուի զետեղման խճանկարներու ( մօզալիք ) որոնք ժամանած են Երրոպայէն։ Ի մօտոյ կը ձեռնարկուի նաեւ շրջապատի շինութեան նուազուրդին։

Կը մնան խորանի շինութիւնը, սալայատակումն, ենթառմերու կնեայ երեսումն, ևն։ Տէ Ֆարրօ տան յանձնարարուած դռներն արդէն ի պատրաստութեան են և եպիսկոպոսական աթոռի, նոտարաններու և այլ կահագործական աշխատութեանց գործը կուտամնասիրուի։ Ելեքտրական զանգակները, զոր բարեսէր ազգային մը նուիրած է, և գարիեօն-ը պիտի հայթայթուին ու զետեղուին ֆրանսական տան մը կողմէ։ Զեռնարկուած է նաեւ եկեղեցւոյ սպառներու պատրաստութեան։

Տիար նաֆիլեան պատրաստած է նաեւ կառուցուելիք երիցատան յատակագիծը։

ԴՐԱՄԱԿԱՆ.— Ցայսօր Տէ Ֆարրօ տան վճարուած է 11887 սոկի և շուրջ 2108 սոկի ալ յարակից ծախուց ( ճարտարապետներ Պ. Պ. Նաֆիլեանի, Գալճի-ի, Նկարիչ Քօլուչի-ի, Եւրոպա կատարուած յանձնարարութեանց, շրջապատի երկաթեայ բազրիքներու, փոխագրութեանց, հսկող պաշտօնէից, երթեւեկութեան ևն .ի ) համար։

Առաջնորդարանիս կողմէ մասնաւոր դիմում կատարուելով է և կամաց առաջնորդարանի համար բերուած առարկաներն մաքսազերծ ընել տալ:

ԵՌԻՊՐԱՅԻ ԿԱԼՈՒԱՄ.— Ինչպէս բացատրուած է տպագրեալ տեղեկագրին մէջ, Շուպրայի երկու տուներն ու գետինը ծախուելով, գոյացած գումարը պիտի յատկացուէր Եկեղեցւոյ շինութեան: Ըստ կտակի այդ վաճառումը պէտք է որ կատարուէր Խառն Դատարանի առջեւ և համաձայն այս արամագրութեան, 1925-ին աճուրդը բացուած է Խառն Դատարանի առջեւ, սակայն և այնպէս նուազագոյն գին սրոշուած 9000 սոկին իսկ առաջարկող չգտնուելով, փակուած է: Միեւնոյն ժամանակ զանազաններ աւելի նպաստաւոր գիներ առաջարկած են եթէ « տ լամիապլը » կատարուի աճուրդը: Այս պարագան հազորդուած է կտակակատար Վահեմ. Պօղոս Նուպար Փաշայի, որ իր հաւանութիւնը փոխանորդագրի ձեւով յդած է Ս. Առաջնորդ Հօր անուան: Այս անօրինութեան մասին հաւանութիւնն ստացուած է նաեւ բարեյիշատակ Գր. Եղիայիանի ժառանգորդներուն: Այս կարգագրութենէն վերջ, աճուրդը կատարուած է Առաջնորդարանիս առջեւ և մի քանի աճուրդի նիստերէ վերջ, կալուածը վաճառուած է բարձրագոյն ( 11500 սոկի ) տուող թէվիքիք պէյ Խալիլի: Կալուածոց Տնօրէն Տիար Զարէն թէսէճեանի ջանքերն այս առթիւ՝ Ժողովս մեծապէս գնահատելի գտած է:

## ԵՂԻԱՑԵԱՆ ՊՈՒՐՍ

Վերջին ութամսեայ շրջանին հետեւեալ անօրինութիւններն եղած են Եղիայեան անուց մտախ։

Նախկին աներէն Պր. Գառնիկ Զաւլումնան դրկուած է Բարիզի Գեղարուեստական վարժարանը հետեւելու համար ճարտարապետութեան։ Իր ձիրքերը ակնյայտնի էին արդէն և ինք։ Մի քանի ամսուան աշխատանքէ վերջ, յաջողած է իր գաստրանին Յ-րգը հանգիստնալ։

Պ.Պ. Համբարձում Գարայեան և Տիգրան Պապիկեան ինչպէս և Օրգ. Խոկուհի Գանանեան և Վեպթորիա Գալֆայեան, տարի մը տեղւոյս Ֆրանսական Լիսէ-ին մէջ մասնաւորաբար ֆրանսերէն լիզուրին ծանօթութիւններն դօրացնելէ վերջ դրկուեցան էքուի էքոլ Նօրմալ Բախմէքը։ Ծաւալի է յայտնել թէ, հակառակ յիշեալ աներուն և անուհիներուն բացարիկ ուշիմութեան, անհնար եղած է իրենց հետեւիլ էքոլ Նօրմալի իրենց գաստրանին և նոյն վարժարանի աշնորհնութեան յանձնարարութեան համաձայն անոնք հիմա կը հետեւին էքոլ Բախմէռ Սիւրէրիէօրի մը գասախոսութեանց։

Անցեալ աշնան Գալստեան վարժարանի նոր շրջանաւարաններէն Եղիայեան սան հոչակուեցան Օր. Արշակուհի Գասապեան և Պ.Պ. Յակոբ Արամնան և Աաշտառուր կանանեան։

Առոնց հետ միանալով նաեւ նախապէս արդէն իրը Եղիայեան սան գաստիարակւող Պ. Հայկ Թորգումեանը, բուլորը միասին դրուեցան տեղւոյս Ֆրանսական Լիսէ-ն։

## ՖԷՐՄԱՆԵԱՆ ՊՈՒՐՍ

Առյն ֆօնտէն օգտուող երկու սաներն՝ Մհծիկ Արայուհեան և Ստեփան Բանիկեան, երկու ամիսէն կ'աւարտեն իրենց ընթացքը Պէյրութի Ամերիկեան Համալսարանին Առեւտրական բաժնին մէջ, ինչպէս ըսուած է տպագրեալ տեղեկագրին մէջ։

## ԱՂՔԱՏԱԽԻՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՆԴՀՆ . ԺՈՂՈՎԸ ԳՈՒմարուելով 1925-ի աշնանամուտին , Գործադիր ժողովոյ անդամ ընտրած է Տեսարք Լեւոն Համայնեան , Դաւիթ Մարգարեան . Դրիգոր Մկրտիչեան և Մելքոն Խաչերեան : Ժողովին կողմէ եւս նշանակուած են Տեսարք Ասրդիս Գալֆայեան , Եփրեմ Եփրեմեան և Դրիգոր Խաչաթեան :

Ընկերութիւնը իր բնականոն գործունեութիւնը յառաջ տանելով ամսական իրր 200 սոկի նպաստ բաշխած , է զըրեթէ նոյնքան թիւով աղքատներու :

Ընկերութեան անդամներու թիւը մօտաւորապէս 200 է և անդամավճարներէ հազիւ ամսական 17-18 սոկի կը գոյանայ : Աղջ , Մնառւկը ամէն ամիս կը տրամադրէ 135 սոկի և 88 սոկի ալ վիճակահանութեան գումարէն կը տրուի : Վերջին ութամսեայ . շրջանին Ընկերութիւնը թատերական ներկայացում մը սարքած է էզպէքիյէ-ի թատրոնին մէջ , որմէ ապահովուած զուտ հասոյթը եղած է իրր 60 սոկի :

Ս . Առաջնորդ Հայրը Վարչապետութեան մօտ գիմում կատարելով յաջողած է վիճակահանութեան տամսերու թիւը 20-էն 30 հազարի բարձրացնել առաջ : Էլիսա Ֆիրուզ կապալառուն իր պայմանագրութեամբ յանձն առած էր այդ պարագային՝ իր վճարած գումարին մէկուկէոը վճարել : Այժմ ձեռնարկուած է այդ տարբերութիւնը եղող 575 սոկին գանձելու :

Ընկերութիւնը ամէն տարի իրր 200 սոկի կը ծախսէ հիւանդանոցներու և գեղօրէից համար : Սեփական հիւանդանոց մը ունենալու գաղափարին իրականացումը քանի որ ներկայիս Հնարաւոր չերեւիր , ժողովս կը թելադրէ որ Հպատիներու և Հրէից նորակառոյց հիւանդանոցներու վարչութեանց մօտ գիմում կատարուի , մի քանի ձրի անկողին ապահովելու համար համայնքիս աղքատներուն :

## ՈՐԲՈՒՀԻՆԵՐ

**Պատ.** Որբապաշտպան մարմինը իր հին կազմով կը շարունակէ իր գործունեութիւնը :

Վերջին 8 ամսուան ընթացքին Գահիրէի 395 որբուհիներուն վրայ աւելցած են 27 ևս, Յունաստանէն դրկուած, որով Գահիրէի մէջ ներկայիս կը գտնուին սկզբնական արձանագրութեամբ 420 որբուհիներ, և Եգիպտոսի մէջ ընդամէնը 713 :

Հետեւեալ վիճակագրական պատկերը գաղափար մը կուտայ անոնց մասին :

Ամուսնացեալ	41
Արտասահման մեկնած	21
Ազգականներու յանձնուած (Եգիպտոսի մէջ)	14
Յիմտրանոց	1
Հելուանի Դարմանատունը	2
Մեռած	3
Ընտանիքներու քով տեղաւորուած	340
Ընդամէնը	422


Վերոգրեալ 340 որբուհիներէն իբր 60-ը թոշակով կը ծառայեն առւներու մէջ 100-350 դահեկան ամսականի վոխարէն : Որբուհիներու մէջ, ապագայի մտահոգութեամբ, հետզհետէ կ'անի գրամավ աշխատելու փափաքը . բան մը

որ թէեւ տեսակետով մը քաջալերելի է . սակայն զերծ չէ անպատճեռութիւններէ ևս :

Որբուհիներուն այս կերպով խնայած դրամներն Որբապաշտպան մարմնոյ կողմէ և Առաջնորդարանիս խողովակով , տոկոսով ի պահ կը գրուին գրամատանց մէջ , ուր արդէն 230 ոսկի գոյացած է սոյն եղանակաւ , առանց հաշուելու որբուհիներու Քրէտի Ֆօնսիէ-ներն : Որբապաշտպան մարմնոյն կողմէ որբուհիներուն հաշուընթացի ընկալագրեր կը տրուին երեք ամիսը անգամ մը պանքաներու գրութեամբ :

Նկատելով որ որբապաշտպան գործը տարիներով պիտի շարունակուի և պէտք ունի տեւական պիւտնէի , և նկատելով որ Կառավարութիւնը վերջերս աւելի թոյլատու ոգի մը կը ցուցնէ վիճակահանութեանց կազմակերպութեան մասին , ժողովս պիտի թելագրէր որ յաջորդ Քաղ . Ժողովը նկատի ունենար Որբապաշտպան մարմնոյ համար եւս վիճակահանութեան արտօնութիւն ձեռք բերելու խնդիրը :

A " 13833



## ՈՐԲԵՐ

Ամերիկեան Նպաստամատոյցը Առաջնորդարանին բարոյական գործակցութիւնը խնդրած էր Գահիրէի մէջ մանչ որրերու Հօմ մը բանալու համար։ Ժողովս սիրով ընդ առաջ երթալով առաջարկութեան, կազմեց յանձնախումբ մը հետեւեալ Պատ։ Ազգայիններէն։

*Տեարք Տքբ. Ֆ. Շէտիտք  
Տքբ. Դ. Արթինեան  
Յ. Զազացպանեան  
Բ. Պալլզճեան  
Գ. Չափընեան (հրաժարած)  
Վեր. Հ. Խանդամուր*

Այս յանձնախումբին կ'անդամակցին նաեւ՝ Ամերիկեան Նպաստամատոյցի կողմէ։

*Տքբ. Վ. Էտի և  
Մը. Թէմպլին*

Առաջնորդարանը սոյն գործին մէջ որեւէ նիւթական պատախանատուութիւնը չէ ստանձնած և գործը կը կառավարուի Նպաստամատոյցի պիւտնէով։ Հօմին բացումը կատարուած է 1925 դեկտ. 20-ին, ի Շուպրա վարձուած մասնաւոր շէնքին մէջ, նախագահութեամբ Ամերիկեան դեսպան Տքբ. Մօրթօն Հառլ-ի, որ շատ մօտէն կը հետաքըրքուի այս հաստատութեան գործերով, և օրհնութեամբ Ս. Առաջնորդ Հօր։

Տէր և Տիկին Խանիկեան ձեռնհասօրէն կը վարեն տընօրէնութեան գործը։ Յունաստանէն բերուած են ընդամէնը 108 սաներ, որոնցմէ 13-ը վերջնականապէս իրենց պաշտպաններուն յանձնուած ըլլալով, անոնց տունը կը բնակին ու կը սնանին։ Ներկայիս շէնքին մէջ կը մնան 95 սաներ։ Թիշեալները կ'աշխատին հայ և օտարազգի առեւտրականնե-

բու և արհեստաւորներու մօտ 20-25 դահնեկան շաբաթականով, և անմիջապէս որ ի վիճակի ըլլան ինքնաբաւ ըլլալու, պիտի արձակութին Հօմ-էն։ Հետագայ վիճակագրական առխոտակը գաղափար մը կուտայ արհեստներու մասին։

Կազմաբար	2	Փորագրիչ	4
Ասեղնագործ	2	Զուլիչ	3
Շապկագործ	5	Կահագործ	5
Ոսկերիչ	5	Դեղագործ	3
Դարրին	3	Շօֆէօր	2
Կոշկակար	10	Մեզենագէտ	5
Տպագրիչ	1	Դերձակ	4
Գրաշար	3	Գորգագործ	2
Երաժշ. գործիք նորոգող		1	
Ուսանող Աղդ. Վարժարան		3	
Գրասենեակի կտոսոն		1	
Լուսանկարիչ		1	
Նպարավաճառ		6	
Սանձնակատար		1	
Զինկօկրաֆ		7	
Առեւտրական		12	

Ս. Առաջնորդ Հօր կողմէ կազմակերպուած է գիշերային գասախօսութեանց ընթացք մը, բացի անգլիերէնի, արարերենի և թուարանութեան գիշերային գասընթացքներէն։ Որքան որ ալ Առաջնորդարանո նիւթական պատասխանատուսթեան որեւէ բաժին չէ ստանձնած Հօմի նախաձեռնութեան մէջ, այսու ամենայնիւ Համայնքիս ծոցին մէջ գտնուող՝ ազգին սոյն սիրելի զաւակաց կարեացը հանդէպ Ա. Առաջնորդ Հայրը չկարենալով անտարբեր գտնուիլ, նուիրահաւաքութեան մի քանի կարեւոր ձեռնարկներ կատարած է, մին կազմանդի առթիւ նուէրներու համար, և միւսը Ա. Զատկի առթիւ հազուստի համար։ Սոյն երկու ձեռնարկներն ալ յաջողութեամբ պատկռած են և Ամերիկեան Դեսպանին ջերմ գնահատութեան արժանացած։

## ԺԱՌԱՆԴԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՄԵԿԻՄ ՀԱՍՊԻ.— Տեղեկագրով ընդգրկուած շրջանին կարեւորագոյն գէպքը էրնայ նկատուիլ ժառանգական խնդրոց մասին կառավարութեան ըրած նոր անօրինութիւնը։ Արգարութեան Նախարարութիւնը, 1925 նոյ. 14 թուակիր շրջարերականով մը, յիշեցնելով պաշտօնաթերթին մէջ երեւցած Մէկլիս Հասպիներու օրէնքը, հրամայած է բոլոր պատրիարքարաններուն, 1926 մարտ 3-էն սկսեալ չի զրադուիլ անչափահաս, բացակայ և տկարամիտ ժառանգորդաց իրաւանց պաշտպանութեամբ և յարակից գործերով և մինչեւ այդ թուականը պատրիարքարաններու կարգադրութեան ենթարկուած նմանօրինակ ժառանգական խնդիրներէն բոլոր առկախները իրեն յանձնել, պատրաստելով վիճակադրական ցուցակներ ըստ կցեալ նմոյշի։

Խնդիրը անշուշտ մեծ կարեւորութիւն ունի Պատրիարքարաններու առանձնաշնորհմանց տեսակէտէն, սակայն և այնպէս մեզմէ շատ աւելի կարեւոր և ստուարաթիւ համայնքներու զիմումներն անհետեւանք մնացած ըլլալով, մեզ համար ընելիք չէր մնար, քանի որ եղածը առաջարկ չէր այլ հրաման։

Ըստ այնմ, յետ մանրակրկիտ քննութեան, պատրաստըուեցան թողօններու ցուցակներ, թիւով 15, և պիտի ներկայացուին Արգարութեան Նախարարութեան, Պայրամէն անմիջապէս յետոյ։

Դարձեալ կառավարութիւնը Մէկլիս Հասպիներու անդամակցելու համար, ձեռնհաս Ազգայնոց անուններն ուղած

բլլալով ստիպողարար՝ ժողովիս կողմէ հազորդուեցան հետեւեալ անունները .

**Մէթր Առօյեան**

**Մէթր Եազուալ Սարգիս**

**Հապիսպ պէյ Գառնուկ**

**Տքթ. Ա. Ժամկոչեան**

**Տիար Հայկ Խնայէթեան**

**Տիար Արմ. Պետեւեան**

**Տիար Գէորգ Մազլըմեան**

ՀԱՇՈՒՆՑԱՐԴԱՐԻ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԹՈՂՈՆՆԵՐ.— Վերջին ամիսներու ընթացքին հետեւեալ կարեւոր թողօններու մասին վերջնական կամ մասնակի հաշուեյարդար կատարուած է .

Գէորգ Ակոբովիչ, Հրանդ Հացունի, Գալուստ Անդրանիկ, Ենովք Գալայնեան, Կարապետ Սարանեան, Յարութիւն քն. Յակոբեան եւն: Խոկ հանդ. Բ. Յօրմիանիի ժառանգութեան թեկնածուներն դատական միջացներով կը հետապնդեն իրենց կարծեցեալ իրաւունքները :

ՀԱՇՈՒԱԿԱԱՆ.— Հաշուակալութիւնը յայտնելով որ երեկոր տարիներէ ի վեր կարդ մը թողօններ փոքր պահանջող կշիռներ ունին հաշուետոմարաց մէջ, յետ քննութեան ժողովս որոշեց փակել այդ հաշիւները՝ հաշուակցելով այդ գումարները գանձելի քասէմիէներու և այլ սակերու հետ:

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ

Թեմական Ժողովոյ պակսած 10 երեսփոխաններու ընտրութիւնը . Ազգ . Սահմանադրութեան և Վարչական հրահանգի տրամադրութեանց համաձայն , 1925 փետր . 28-ին կատարուեցաւ և երեսփոխան ընտրուեցան հետեւեալ պատ . ազգայինք :

Տեսրը	քուէով
Հայկ Խայէթեան	733
Լեւոն Կոկանեան	724
Լոժէն Բաբազեան	722
Կարապետ Սէֆէրեան	717
Տքթ . Ա . Տէր Մարգարեան	705
Գէորգ Ցիւլկէրեան	703
Սերովբէ Գէրպէրեան	690
Երուանդ Եազըճեան	685
Կարապետ Գանաբեան	676
Յովհաննէս Սէքսէնեան	674

Ընտրական գործողութեանց մասին Ժողովս արդէն նախապէս մանրամասն տեղեկագիր ներկայացուցած ըլլալով Պատ . Ժողովիդ , հոս աւելորդ կը համարենք մանրամասնութիւններ յիշատակել :

## ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆՔ

Վարչապետ Վահեմ. Զիվեր փաշայի հետ Առաջնորդ Ս. Հայրը զանազան առիթներով ունեցած է տեսակցութիւններ, արժանանալով Ն. Վահեմութեան բացառիկ մեծարանաց :

Միջեկեղեցական Եղբայրակցութեան ժողովներուն Ս. Առաջնորդ Հայրը կամ Դիւանապետը ներկայ գտնուած են, ի մասնաւորի Արշտիքն Լիսթը-ի ընծայման, Վիքթորիա Հօթըլ-ի մեծ հացեկերոյթին, եւայլն :

Ամերիկացի հանգուցեալ Միսիսինարներու հոգեհանգստեան տարեկան պաշտօնը կատարուած է այս տարի եւս, ի ներկայութեան Ամերիկ. Դիսպան Վահեմ. Տքթ. Հառւլ-ի և ամերիկեան գաղութի ստուար մասին :



## ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ

Ժողովս, վերջին ամիսներու ընթացքին, նկատի ունենալով շուրջ 6 տարիներէ ի վեր իրր կալուածոց Վերահըսկիչ Պր. Զ. Քէսէնեանի բարուոք ծառայութիւններն, անորպաշտօնը բարձրացուց կալուածոց Ցնօրէնութեան:

Տպագրեալ տեղեկագրին մէջ վերջին պահուն իրր ծառնօթութիւն դրուած էր Հեսասի անբեր պարակին 9 տարուան պայմանաժամով Ֆէհմի Հաննայի վարձու տրուած ըլլալը: Վերջին ամիսներու ընթացքին վարձակալական կարեւոր պայմանագրութիւնը ըլլալով յիշտափութեան արժանի է Տէլկայի 250 ֆետտանի վարձակալութիւնը Ապտէլ Համիտ Խալիլի, Յ տարուան համար և ֆէտտանը 985 դահկ. էն, ինչ որ գնահատելի յաջողութիւն մը կրնայ նկատուիլ ի մտի ունենալով նախորդ գիներն: Եթէ կարելիութիւնը ըլլար պարակին մէջ 2 ջրհորներ բանալ, ֆէտտանը 1200 դահկ. էն կարելի պիտի ըլլար վարձակալ գտնել. բայց այդ ջրհորները իսկոյն նախ քան այդ պայմանագրութիւնը բանալ անկարելի եղած է: Յաջորդ Քաղ. Ժողովոյ համար նկատառման կարեւոր պարագայ մ'է այս կէտը:

Ժողովս յարմար դատած է Շէյխ Էթման-ի մէջ ջրաբաշխական տեսակէտներով կենսական կարեւորութիւն ունեցող մէկ քրաթ հողամաս մը գնել 14 եզ. ոսկեոյ փախարէն:

Նկատի ունենալով որ Շէյխ Էթմանի կէղիրէի հողերէն իրր 60-82 ֆէտտան հողամաս մը նեղոսը քշած է, կալուածոց Պր. Ցնօրէնն հարկ եղած կարգադրութիւններն ըրած է Ոռոգմանց Ա. Շրջանակի Ընդհ. Երկրաշափին հետ, Նեղոսի այդ մտսի ջուրերուն ընթացքը փոխել տալու համար, շի-

նելով քարէ թումբեր, Համամիյէթ Զօրէն սկսեալ, այս  
կերպով ապահովելու համար հողերու յաւելում։

Շէխ էթմանի վարձակալներէն Մուսա-Ալի-Պարսի, Միւթէվէլի Համբաէ-ի էքսրէռթիզի, Մուհամմէտ Պիլալի և  
այլոց գէմ բացած դատերն շահած է Առաջնորդարանս և  
յիշեալներուն պարտքերը գանձուած են։

Իսկ էքֆասի մէջ ձեռնարկուած է ջրհանի կցուած  
խողովակներուն մաքրագործման և նորոգութեան գործին։

ՄԱՍՆԱԳԻՏ. — Ժողովս այս յաւելուածով կը  
կրկնէ վճարեալ և մասնագէտ քննիչ մը վարձելու և ազա-  
րակներուն շահագործման և մատակարարութեան մասին ա-  
նոր տեղեկագիրն ստանալու մասին նախապէս իր ըրած  
թելագրութիւնը։

Ժողովս պաշտօնէ քաշուելէ առաջ ամենասախողական  
հրահանգներ տուած է կալ. Տիար Տնօրէնին, Հեսասի և  
էքֆասի վարձակալութեանց երաշխաւորագիրը պատրա-  
տելու։



## ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ 1925 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Տպագրեալ տեղեկագրին մէջ ակնարկուելով ընթացիկ (1925) տարեշրջանի համար պատրաստուած պիւտնէին, ըստուած է թէ տարեշրջանը աւարտած չըլլալով, կարելի չըլլար ըսել թէ կանխատեսուած հասոյթներն ու ծախքերը ինչ համեմատութիւններով պիտի իրականանան:

Այժմ տարեշրջանը աւարտած ըլլալով, կը տեսնենք կցեալ հաշուեկշիռէն թէ 1925 տարեշրջանին ընթացքին իւրագործուած հասոյթից համագումարը եղած է 14,888 հզ.սս. 649 միլիէմ, իսկ ծախուց համագումարը եղած է 14,225 հզ.սսկի 834 միլիէմ, որով Ազգ. Սնտուկը ունեցած է 662 հզ.սսկի 615 միլիէմ հասոյթից առաւելութիւն մը: Այս կերպով Առաջնորդարանի և իր զանազան նիւղերուն տարիներու ընթացքին իրենց հասոյթներէն աւելի ծախսած 2,371 հզ.սսկի 754 միլիէմ-էն կրնանք զեղչել վերոգրեալ 662 հզ.սսկի 615 միլիէմ-ը, որով Առաջնորդարանի և զանազան Հոգաբարձութեանց Ազգ. Սնտուկի հանդէպ ունեցած պարտքը կ'իջնէ 1,709 հզ. սսկի 139 միլիէմ-ի:

Ինչպէս կը տեսնուի հաշուեկշուի քննութենէն, ծախուց և հասոյթից կշիռը մեծապէս ի նպաստ հասոյթից փոխող գլուխը Աղքատաց Հոգաբարձութեան հասոյթից գլուխի առաւելութիւնն է, որով կը գոցուին միւս պարտական Հոգաբարձութեանց բացերն և աւելցուք մ'ալ կը մնայ: Այս մասին տպագրեալ տեղեկագրին մէջ հարկ եղած բացառութիւնը տրուած է:

Իսկ Ազգ. Սնտուկին տնտեսական ընդհ. և իրական կացութեան մասին նոյն տեղեկագրին մէջ անհրաժեշտ և մանրամասն բացատրութիւններն արուած ըլլալով, աւելորդ կը համարենք հոս կրկնել զանոնք: Միայն կ'արժէ յիշել թէ հաշուեյարդարի պատկերը երբ պարզենք, Ազգ. Սնտուկին պահանջքն ու պատրաստը փոքր համեմատութեամբ աւելի կ'երեւին ընդհ. պարտքէն:

## ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

---

Կրօն . Ժողովը վերջին 8 ամսուան ընթացքին իր հին կազմով և ատենապետութեամբ Արժ . Տ . Յարդիսեանի , գումարած է 16 նիստ և զբաղած 21 ամսուանական խնդիրներով որոնցմէ լուծուած են 2 - ը ,

Տ . և Տիկ . Արմենակ Յովհաննէսեանի ամուսնութիւնն , այրն արտօնելով վերամուսնանալու և կինը զրկելով այդ իրաւունքէն .

Տ . և Տիկ . Յովհակիմ Քսաքեանի ամուսնութիւնն , կինն արտօնելով վերամուսնանալու :

Մնացեալներէն 4 - ը յղուած են Խառն Ժողովոյ , 2 - ը վերջացած են հաշտութեամբ , իսկ մեծ մասին քննութիւնը կը չարունակուի դեռ :

---

## ԽԱՌՆ ԺՈՂՈՎ

Նոյն ժամանակաշրջանին խառն ժողովն ալ գումարուած է 6 անգամ եւ զբազած՝ 9 ամսւանական խնդիրներով և 3 վերամուսնութեան արտօնութեան խնդրանքներով որոնք չնորհուած են:

Վերոյիշեալ 9 ամսւանութիւններէն 5-ը լուծուած են, 1-ը վերջացած հաշտարար կարգպարութեամբ, իսկ 3-ին քննութիւնը դեռ կը շարունակուի:

Լուծուած ամսւանութիւններն են,

1.— Տ. և Տիկ. Ստեփան Գարակէօղեան ամուսն. խնդիր: Այր թէ կին զրկուած վերամուսնութեան իրաւունքէ:

2.— Տ. և Տիկ. Հրանդ Շիշլեան (կինը Ֆիմի ծն. Շարլեան, արտօնեալ վերամուսնութեան, այրը բժշկական վկայական ներկայացնելէ վերջ միայն արտօնուած):

3.— Տ. և Տիկ. Յովհ. Հիւրմիւղեան (կինը Վիքթորիա արտօնուած վերամուսնութեան, այրը զրկուած անպայման ժամանակաւ):

4.— Տ. և Տիկ. Արմենակ Արեւելեան (ինքնին լուծուած, զի կինը իսլամացած է):

5.— Տ. և Տիկ. Տելեմաք Գարակէօղեան (երկու կողմն ալ զրկուած վերամուսնութեան իրաւունքէ, անպայման ժամանակաւ):

# ՎԵՐՋԱԲԱՆ

Իր վարչական և հաշուական գործառնութեանց համարտառութեան սոյն յաւելուածական տեղեկագիրը մատուցանելով, ժողովս պարտք կը համարի իր սրտագին չնորհակալիքն յայտնել իր նախագահին, թարձր. Տ. Թորգոմ Ս. Արքեպ. Գուշակեանի, իր թանկագին առաջնորդութեան և գուծակցութեան համար, որով ան մեծապէս դիւրացուցած է ժողովիս աշխատանքը, ներկայացեալ բոլոր կարգի խընդիրներու լուծման նպաստելով իր երկարամեայ փորձառութեան և բազմաբեղուն աշխատութեան անդնահատելի սատարովը:

Պարտք կը համարինք նաեւ մեր խոր չնորհակալիքն յայտնել Պատ. Ժողովիդ, այն վաստահութեան համար որով միշտ պատուած է զմեղ, ինչպէս նաեւ մեր երախտագիտութիւնը զանազան Հոգաբարձութեանց և Յանձնախուժը երու ժրաշան անգամներուն, որոնց գործակցութեամբը կրցինք ի գլուխ հանել առաջադրուած նպատակներն :

Ժողովիս որդեգրած գործունէութեան ուղղութիւնը եղած է այն զոր Ս. Առաջնորդ Հայրը եւս ի սկզբանէ անտի իւրացուցած է, այսինքն գործել անշշուկ ընթանալով պարտականութեան ուղեգծէն, առանց մեծաշռինդ յայտարարութիւններու, տալով միայն օրինաւոր համարատուութիւն։ Մեր տպագրեալ տեղեկագիրը և ներկայս կը կազմին մեր պաշտօնական համարատուութիւնն ժողովրդեան ներկայացուցիչներէ կազմուած Պատ. Ժողովիդ։ Խսկ մեր ամբողջ պաշտօնավարութեան ընթացքին մամլոյ միջոցաւ ժողովուրդը գիտակ պահած ենք մեր գործառնութեանց կարեւոր մասերուն։

Հարեւանցի ակնարկ մը տեղեկադրին կը բաւէ ցոյց  
տալու թէ սոյն կարճատեւ շրջանին կառուցուած են եկեղե-  
ցի և զպրոց, զնուած է գերեզմանատուն, բացուած են որ-  
բանց, զպրոց, պատսպարուած են՝ սնուցուած ու յանձնանձ-  
ուած՝ հարիւրաւոր որրուհիներ, վերտկազմուած են Առաջ-  
նորդարանի և զպրոցի պաշտօնէութիւններն, իրազործուած  
են խնայողութիւններ և ձեռք բերուած է հասոյթներու  
զգալի առաւելութիւն :

Խոկ եթէ կամքէ անկախ պատճառներով գործուած են  
թերիներ կամ մոռցուած կարեւոր անօրինութիւններ, ժո-  
ղովս կը յուսայ թէ Պատ. Թեմական Ժողովդ նորընտիր Քաղ.  
Ժողովին ցոյց պիտի տայ հարկ եղած ուղղութիւնն Ար-  
ցնելու համար այդ պահանները :

Ասրին յարգանաց հաւասարեք

ի դիմաց Քաղ. Ժողովոյ

Ասենադպիր

Ասենապես

Տ. Ա. ՏԵՐՄԱՐԴԱՐԵԱՆ

Տ. Ա. Բ. ԺԱՄԿՈՂԵԱՆ



ԾԱՆՈՒ. — Գաւառական վարչութեան Քաղ. Ժողովոյ  
երկամեայ գործունեութեան տեղեկագիրը, ինչպէս նաև ներ-  
կայ յաւելուածք Թեմական Ժողովի 18 Օգոստս 1926-ի  
111 րդ նիստի, մէջ վայերացեալ է:


Ասենադպիր Թեմական Ժողովոյ  
ԿԱՐԱՊԵՏ ՍԵՒՅԵՐԵԱՆ





ЦЕНА

13833



ԳԱԱ Համարակար Գիտ. Գրադ.



FL0012352